ԻՍՊԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հունիսի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի նոր նշանակված դեսպան Խուան Անտոնիո դե Իտուրիագա Բարբերան՝ իր տիկնոջ և դեսպանատան աշխատակից Ռաֆայել Դեսկալյար Մասարրեդոյի ուղեկցությամբ: Վեհարանում հարգարժան հյուրերին ընդունեց Մայր Աթոռի Դիվանապետ Գերաշնորհ Ներսես Արք. Պոզապալյանը:

Սրբազան Հայրն անձամբ իր և Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունից ջերմորեն ողջունեց պարոն Իտուրիագային և շնորհավորեց նրան այդ դժվարին և պատասխանատու պարտականության ստանձնման առթիվ և մաղթեց նրան բազում հաջողություններ Հայաստանում:

Այնուհետև Սրբազան Հայրը հյուրերի խնդրանքով նրանց պատմեց Հայ Առաքելական եկեղեցու անցած դժվարին և տառապալից ուղու մասին, ներկայացրեց մեր եկեղեցու արդի վիճակը, նրա ունեցած դերը, նշանակությունը, խնդիրները ու առաքելությունը մեր ազատ ու նորանկախ հանրապետության կյանքում: Սրբազան Հայրը ներկայացրեց նաև Հայ Առաքելական եկեղեցու կառուցվածքը թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Նա շեշտեց այն հանգամանքը, որ Հայ Առաքելական եկեղեցին մշտապես եռանդագործակցել և այժմ էլ սերտ բարեկամական փոխհարաբերությունների մեջ է գտնվում աշխարհի այլ քրիստոնյա եկեղեցիների հետ:

Հյուրերը ծանոթացան Հայ Առաքելական եկեղեցու բազմադարյա պատմությանը, շրջեցին Մայր Աթոռի բանգարաններում և դիտեցին հայ եկեղեցական արվեստի գանձերը:

ԱՆԳԼԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՄԲԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Անգլիայից Հայաստան ժամանած ուսանողների և ուսանողուհիների խումբը՝ «Ուսուցողական ճամփորդություններ» ծրագրի դեկավար պարոն Ջոն Օթերվոլի գլխավորությամբ: Խմբին հյուրընկալեց և Վեհարանի իր աշխատասենյակում ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տեղի ունեցած անկեղծ և ջերմ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերի խնդրանքով մանրամասն տեղեկություններ հայտնեց Հայ Առաքելական եկեղեցու նստավայր և հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Ս. Էջմիածնի, Մայր Աթոռի գործունեության մասին, համառոտ կերպով նրանց ներկայացրեց հայ ժողովրդի և եկեղեցու բազմադարյա պատմությունն ու անցած ուղին:

Վեհափառ Հայրապետը խիստ կարևորեց հայ ժողովրդի համար եկեղեցու դերն ու նշանակությունը հատկապես այս դժվարին ու հակասություններով լի ժամանակաշրջանում:

Պատմելով Հայ Առաքելական եկեղեցու մասին, Նորին Սրբությունն անդրադարձավ նաև էկումենիկ փոխհարաբերություններին և համագործակցությանն աշխարհի այլ եկեղեցիների հետ՝ դրանց թվում մատնանշելով Հայ Առաքելական եկեղեցու պատվիրակության աշխույժ և գործնական մասնակցությունը վերջերս Ավստրիայի Գրաց քաղաքում հրավիրված Եվրոպական Երկրորդ էկումենիկ Համաժողովին: